ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Պայմանագրի համարը, ամսաթիվը	«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/41» «20» հոկտեմբերի 2017թ.
2. Պայմանագրի կողմը	«Սմարթ Սոլուշնս» ՍՊԸ (անվանումը)
3. Պայմանագրի առարկան	Ենթակայանների սերվերների սպասարկման ծառայությունների մատուցում
4. Պայմանագրի գումարը	6100000
5. Պայմանագրի գործողության ժամկետը	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 2 տարի
6. Գնումների կատարման ծածկագիրը	ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/41
7. Հայտերի բացման ամսաթիվը	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

N	Պաշտոնը	Անուն Ազգանուն	Ստորագրություն
1.	Տեխնիկական տնօրեն	Ռ. Խաչատրյան	
2.	Վարչական տնօրեն	Ա. Շուշյան	
3.	Մատակարարման բաժնի պետ	Հ. Գևորգյան	
4.	Իրավապայմանագրային բաժնի պետ	Հ. Մարգարյան	
5.	Գլխավոր հաշվապահ	Է. Նիկողոսյան	
6.	Գնումների համակարգող	Ռ. Ալբերտյան	

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/41»

ք. Երևան 20 հոկտեմբերի 2017 թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Սմարթ Սոլուշնս» ՍՊ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Շ. Քարամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում մատուցել սույն պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված՝ 220/110/35 և 220/110/10 կՎ ենթակայանների սերվերների սպասարկման ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունը և վարձատրել դրա դիմաց՝ համաձայն պայմանագրի N 2 հավելվածի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 Կատարողի կողմից սույն պայմանագրում նշված ժամկետի խախտման դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանել Ծառայության մատուցման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրով նախատեսված տույժը:

2.1.3 Չընդունել Ծառայությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը:

2.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կատարողը ժամանակին չի սկսում Ծառայության մատուցումը կամ Ծառայությունը մատուցում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կատարողի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

գ) Կատարողը խախտել է սույն պայմանագրում նախատեսված ժամկետը,

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Ծառայությունը մատուցելիս՝ աջակցել Կատարողին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

2.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել մատուցված Ծառայությունը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Ծառայության արդյունքը վատթարացնող շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին.

2.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

2.2.4 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում Ծառայության արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

2.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Կատարել մատուցվող Ծառայության վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

2.4.2 Ծառայության արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Ծառայության արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

2.4.3 Սույն պայմանագրում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Ծառայության մատուցման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Ծառայության մատուցումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրով նախատեսված տույժը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել պայմանագրով նախատեսված տուգանքը:

2.4.5 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ (Հավելված 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին:

«ԲԱՐԵՍԻՐԱՏՈՒՆ ՓԲԸ ԼԵՌՆԱՅԻՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐՈՅԻՆ ԲԱԺԻՆ

Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Ծառայության կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կատարողը պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Ծառայությունն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումը ստուգում է մատուցված Ծառայության համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե մատուցված Ծառայությունը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

3.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6.100.000 /վեց միլիոն հարյուր հազար / ՀՀ դրամ, որից ԱԱՀ կազմում է 1.016.667 /մեկ միլիոն տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Ծառայության գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

4.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

4.4 Պատվիրատուն վճարում է Ծառայության կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների դիմաց՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով ընդունելու դեպքում անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 2 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 1 (մեկ) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու, ինչպես նաև նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարվող գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

«ԲԱՐՁՐԱՑԱԾ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.10 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«Սմարթ Սոլուշնս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 1, 12/49
Հայբիզնեսբանկ Մալաթիա մ/ճ	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ 2205633304420000
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 01256686
Ա. Բաղդասարյան	Շ. Բարամյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
«20» 10 2017թ. կնքված
«ԲԷՅ-ԳՀԾՁԲ-17/41» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության						
անվանումը	տեխնիկական բնութագիրը			ընդհանուր քանակը	մատակարարման	
					հասցեն	Ժամկետը
220/110/35 և 220/110/10 ԿՎ ենթակայան ների սերվերների սպասարկում	1.1	«Վանաձոր 2» ենթակայան, իրար փողկապակցված թվով 3 Alstom սերվեր	Կատարողը պետք է կատարի ենթակայանների բոլոր սերվեր - կլիենտ համակարգիչների երաշխիքային սպասարկում երկու տարի ժամկետով: Անվտանգության նկատառումներից ելնելով հեռահար սպասարկումը խստիվ արգելվում է: Կատարողը պատասխանատու է սերվեր - կլիենտ համակարգիչների և ծրագրային և ապարատուրային մասով ծագած բոլոր խափանումների համար: Բոլոր սերվեր - կլիենտ համակարգիչների կոշտ կրիչների և մայր պլատաների փոխարինման անհրաժեշտության դեպքում կոշտ կրիչները և մայր պլատաները տրամադրվում են Կատարողին Պատվիրատուի կողմից: Մնացած բոլոր բաղկացուցիչ և անհրաժեշտ պահեստամասերը սերվեր - կլիենտ համակարգիչների համար տրամադրվում են Կատարողի կողմից: Կատարողը պարտավոր է առկա թերությունները (ծրագրային (MicroScada և այլ) և ապարատային) վերացնել սեղմ ժամկետներում և սերվեր - կլիենտ համակարգիչները բերի Պատվիրատուի համար աշխատունակ և կայուն վիճակի: Խափանման կամ խնդիրների առաջացման դեպքում արձագանքում ք. Երևանում գտնվող ենթակայանում մինչև 2 աշխատանքային ժամ, իսկ մարզերում գտնվող ենթակայաններում մինչև 8 աշխատանքային ժամ: Կատարողը պարտավոր է այցելի նշված ենթակայաններ կլիենտ-սերվեր համակարգիչների պրոֆիլակտիկայի և դիագնոստիկայի նպատակով երեք ամիսը մեկ անգամ (անկախ նրանից կան	1	ք.Վանաձոր, Թևոսյան 2 «Հյուսիսային» մասնաճյուղ, «Հյուսիսային-2» ենթակայան ք.Ալավերդի, «Ալավերդի» ենթակայան ք.Գյումրի, Ղարսի խճուղի 25., «Արևմտյան» մասնաճյուղ, «Գյումրի-2» ենթակայան գ.Լիճք, «Կամո» ենթակայան ք.Երևան, Տիչինայի փող.,«Շահումյան-2» ենթակայան Ք. Երևան, Անդրանիկի 1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրից 2 տարի
	1.2	«Ալավերդի» ենթակայան,իրար փողկապակցված թվով 3 Alstom սերվեր				
	1.3	«Կամո» ենթակայան, իրար փողկապակցված թվով 3 Alstom սերվեր				
	1.4	«Գյումրի-2» ենթակայան,իրար փողկապակցված HP ProLiant Dt 380 Gen7 թվով 2 սերվեր և երեք կլիենտ				

«ՀԱՅԿԱՆԱՏՈՒՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

		համակարգիչ	խափանումներ նշված ենթակայաններում թե ոչ), գրավոր տրամադրի իր եզրակացությունը սերվեր - կլիենտ համակարգիչների աշխատանքի և աշխատունակության վերաբերյալ, ինչպես նաև տրամադրի տեղեկատվություն և առաջարկներ ղեկավարման վահանակները սնուցող անխափան սնուցման սարքերի և ինվերտորների աշխատանքի վերաբերյալ, աջակցում նոր անխափան սնուցման սարքերի և ինվերտորների ընտրման և տեղադրման հարցում: Ցանկացած տիպի աշխատանքների կամ ծառայությունների կատարման ժամանակ Պատվիրատուի կողմից ներկայացուցչի ներկայությունը պարտադիր պայման է:			
	1.5	«Շահումյան-2» ենթակայան թվով 1 սերվեր (Dell PowerEdge 2600) և մեկ կլիենտ համակարգիչ				

Այլ պայմաններ	
Ծառայությունների մատուցումը	**Ամսեկան, ըստ հանձնման ընդունման երկկողմանի արձանագրության:** **Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն ժամանակին և որակյալ: Անհրաժեշտությունից ելնելով ծառայության մատուցումը իրականացվում է Կատարողի համապատասխան արհեստանոցներում, որի դեպքում սարքավորման (սարքավորումների) տեղափոխություն(ներ)ը իրականացվում են Կատարողի ուժերով և միջոցներով, որի մեջ մտնում է նաև ճանապարհածախսը: Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի արժեքները ներառվում են ծառայությունների ընդհանուր գնի մեջ:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի 1
Հայրիգնեսբանկ Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀԿՀՀ 01522459

Ա. Բաղդասարյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Սմարթ Սոլուշնս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 1, 12/49
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220563330442000
ՀԿՀ 01256686

Ն. Քարամյան
(ստորագրություն)

Հավելված N 2
«20» 10 2022թ. կնքված
«ԲԷՅ-ԳՀԾՁԲ-17/41» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երկկողմ ստորագրված հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, հանձնման-ընդունման արձանագրության երկկողմանի ստորագրվելուց հաշվված 90 աշխատանքային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի 1
Հայբիզնեսբանկ Մալաթիա մ/ճ
Հ/Հ 01500011726303 00
ՀՎՀՀ 01522459

Ա. Բաղդասարյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Սմարթ Սոլուշնս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 1, 12/49
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220563330442000
ՀՎՀՀ 01256686

Հ. Քաղդամյան
(ստորագրություն)

Հավելված 3
« » 20 թ. կնքված
«ԲԷՅ-ԳՀԾՁԲ-17/41» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«ՍՄԱՐԹ ՍՈԼՈՒՇՆՍ» "SMART SOLUTIONS" "СМАРТ СОЛУШНС" 01256686

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐՈՍԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ